



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԼԵՆՏԵՅԼԻ
 ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԾԻՆՈՒԹԵԱՆ
 ԾՐԱԳՐՈՒՄԻ ՎԱՐԻՉԸ**

Հինգշաբթի, 24 Յունուարի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Կլենտէյլի քաղաքապետութեան քաղաքաշինութեան բաժանմունքի ծրագրումի գրասենեակին վարիչը՝ Տիար Հասան Հաղանի: Անոր կ'ընկերանար քաղաքապետարանի քարտուղարներէն Տիար Արտաշէս Քասախեան: Հանդիպումին ներկայ եղաւ Ս. ստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Կոմիտաս Քինյ. Թորոսեան:

Տիար Հասան Հաղանի ծանօթացաւ Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքին ու գոհունակութիւն արտայայտեց անոր ճարտարապետական յատանիչներուն մասին: Ան ընդհանուր ծանօթութիւններ տուաւ իր գրասենեակի աշխատանքի դաշտերուն ու ծրագիրներուն մասին, պատրաստակամութիւն յայտնելով սերտօրէն գործակցելու Ազգային Առաջնորդարանիս եւ հայ համայնքին հետ, մանաւանդ երբ ունենանք շինարարական ծրագիրներ:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց հիւր պաշտօնատարին պատրաստակամութեան համար ու յաջողութիւն մաղթեց անոր՝ իր առաքելութեան մէջ:

**PRELATE WELCOMES THE DIRECTOR OF THE
 GLENDALE CITY PLANNING DEPARTMENT**

On the morning of Thursday, January 24th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the director of the City of Glendale Planning Department Mr. Hassan Haghani. Accompanying Mr. Haghani were Glendale City Clerk Mr. Ardashes Kassakhian and Pastor of St. Mary's Church Rev. Fr. Gomidas Torossian.

During their meeting Mr. Haghani became familiarized with the Prelacy headquarters and in turn conveyed information about the work the Planning Department carries out. He also expressed willingness for collaboration with the Prelacy and the Armenian community, specifically in construction realm.

The Prelate thanked the guests for their support and wished them success in their endeavors.